

**«Հայաստանի Հանրապետության կառավարության
2021 թվականի սեպտեմբերի 16-ի N 1481-Ն
որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության կառավարության
որոշման նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

«__» _____ 2022 թվականի N __-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 1481-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածին
համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը
որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի
սեպտեմբերի 16-ի «Մաքսային մարմնի կողմից ներմուծման
մաքսատուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ վճարելու
մասին որոշման ընդունման և չեղյալ ճանաչման կարգը սահմանելու
մասին» N 1481-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և
փոփոխությունը՝
- Որոշմամբ սահմանված հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 2-րդ կետից
հետո լրացնել նոր 2.1-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Նախնական մաքսային հայտարարագրով հայտարարագրվող ապրանքների ներմուծման մաքսատուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ վճարելու համար հայտարարատուն կարող է մաքսային մարմին ներկայացնել մեկ դիմում մեկ տարին չգերազանցող որոշակի ժամանակահատվածում իրականացվող ներմուծումների համար:»:

- Հավելվածի 5-րդ կետում «ներկայացվել» բառից հետո լրացնել «կամ ներկայացվելու» բառերը.
- Հավելվածի 7-րդ կետի 5-րդ ենթակետում «տրամադրում» բառից հետո լրացնել «, ընդ որում՝ նախնական հայտարարագրման առանձնահատկություններով ներմուծվող ապրանքների համար նշվում է մաքսատուրքի գծով այն պարտավորությունների առավելագույն հանրագումարը, որոնք կարող են միաժամանակ առաջանալ խնդրարկվող ժամանակահատվածում ներկայացվելիք նախնական մաքսային հայտարարագրերի հիման վրա ներմուծվող և բաց թողնվող ապրանքների համար» բառերը.
- Հավելվածի Ձև N1-ը և Ձև N2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված

ՀՀ կառավարության 2022 թվականի _____ N ____ -Ն որոշման

Ձև N 1

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ

Մաքսատուն-վարչության անվանումը

ԴԻՄՈՒՄ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ
ԺԱՄԿԵՏԻ ՀԵՏԱԶԳՄԱՆ ԿԱՄ ՏԱՐԱԺԱՄԿԵՏ ՎՃԱՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վճարողի անունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կամ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը և հայրանունը).

Վճարողի հասցեն (իրավաբանական անձի դեպքում՝ գտնվելու վայրի հասցեն, անհատ ձեռնարկատիրոջ կամ ֆիզիկական անձի դեպքում՝ հաշվառման հասցեն), հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն.

Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)՝ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար, անձը հաստատող փաստաթղթի համարը՝ ֆիզիկական անձանց համար.

Խնդրում եմ տրամադրել Ներմուծման մաքսատուրքի հետաձգման կամ տարաժամկետ վճարման (ընդգծել համապատասխան տարբերակը) հնարավորություն՝ _____ դրամի չափով, _____ ամիս ժամկետով՝ հաշվի առնելով Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված հետևյալ հիմքի (հիմքերի) առկայությունը.

Ներմուծման մաքսատուրքի հետաձգման կամ տարաժամկետ վճարման հնարավորությունը խնդրում եմ տրամադրել _____ ժամանակահատվածում նախնական մաքսային հայտարարագրով հայտարարագրվող ապրանքների Ներմուծման համար (լրացվում է միայն նախնական հայտարարագրման առանձնահատկություններով ներմուծվող

ապրանքների համար)

ԴԻՄՈՂ՝

(դիմումատուի անվանումը)
(ստորագրություն)

« ____ » _____ 20__ թ.